

17.07.2009թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Լ.Խաչատրյան (իրավաբանական բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Ա. Ավագյան (գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ), Լ.Գրիգորյան (գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ), Ա. Անանյան (արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` վեց հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2004-2008 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանագրքով տվյալների բազաները ԱՄՆ Դյուք համալսարանի ուսանողուհի Մերի Պողոսյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող` Դ. Մարտիրոսովա/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2008 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող` Դ. Մարտիրոսովա/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2009 թվականին իրականացված «Առողջապահական կազմակերպությունների և դեղատների ֆինանսական գործունեության և տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի ընտրանքային հետազոտություն» և «Առողջապահական ոլորտի գործունեությունը գնահատելու նպատակով տնային տնտեսություններում զանգվածային հետազոտություն» ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող` Դ. Մարտիրոսովա/

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2008 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող` Դ. Մարտիրոսովա/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1. Հաղորդում Շվեդիայի Օրեբրո և Ստոկհոլմ քաղաքներում 25.05-29.05.2009թ. տեղի ունեցած «Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր» ծրագրի շրջանակում Շվեդիայի վիճակագրական բյուրո այցելության վերաբերյալ:

/Ձեկուցողներ` Ս.Մնացականյան, Գ.Անանյան, Ա.Ավագյան, Ա.Սաֆյան, Լ. Գրիգորյան/

5.2. Հաղորդում Վրաստանի Թբիլիսի քաղաքում 25.06.2009թ. տեղի ունեցած Էներգետիկայի վիճակագրության վերաբերյալ տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող` Ա. Անանյան/

6. Այլ հարցեր:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2004-2008 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանագերծված տվյալների բազաները ԱՄՆ Դ-յուք համալսարանի ուսանողուհի Մերի Պողոսյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

տրամադրել 2004-2007 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2008 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009 թվականին իրականացված «Առողջապահական կազմակերպությունների և դեղատների ֆինանսական գործունեության և տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի ընտրանքային հետազոտություն» և «Առողջապահական ոլորտի գործունեությունը գնահատելու նպատակով տնային տնտեսություններում զանգվածային հետազոտություն» ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին իրականացված «Առողջապահական կազմակերպությունների և դեղատների ֆինանսական գործունեության, և տնային տնտեսությունների կողմից առողջապահական

ծառայությունների վրա կատարված ծախսերի ընտրանքային հետազոտություն» և «Առողջապահական ոլորտի գործունեությունը գնահատելու նպատակով տնային տնտեսություններում զանգվածային հետազոտություն» ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2008 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2008 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

Հաղորդում Շվեդիայի Օրեբրո և Ստոկհոլմ քաղաքներում 25.05-29.05.2009թ. տեղի ունեցած «Գյուղացիական տնտեսությունների ռեզիստր» ծրագրի շրջանակում Շվեդիայի վիճակագրական բյուրո այցելության վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Գ.Անանյան, Ա.Ավագյան, Ա.Սաֆյան, Լ.Գրիգորյան/

5.2. Հաղորդում Վրաստանի Թբիլիսի քաղաքում 25.06.2009թ. տեղի ունեցած Էներգետիկայի վիճակագրության վերաբերյալ տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Անանյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ